

կախված չեն արտադրողի ֆինանսական արդյունքներից: Վերջիններս ներառվում են ապրանքների և ծառայությունների արժեքի մեջ:

Հարկերի գանձումը բյուջեի եկամուտների ձևավորման հիմնական աղբյուրն է: Որպես կանոն, հարկազանձման նպատակը պետական իշխանության տարբեր մակարդակների վճարողունակության ապահովումն է, սակայն հարկային վճարումները կարող են ուղղված լինել ոչ միայն պետական և տեղական բյուջեներ, այլ նաև կարող են հանդես գալ որպես տարբեր ֆոնդերի ստեղծման աղբյուր (օրինակ, պետական սոցիալական արտաբյուջետային ֆոնդեր):

Տնտեսագիտական առումով հարկերը կատարում են ազգային եկամտի վերաբաշխման գործառույթ: Նրանք արտադրության միասնական պրոցեսի մաս են և արտադրական հարաբերությունների յուրահատուկ ձև: Ազգային եկամտի մի մասը, որը վերաբաշխվում է հարկերի միջոցով, ձևավորում է պետության ֆինանսական ռեսուրսների կենտրոնացված ֆոնդը: Ֆրանսիացի գրող և փիլիսոփա Վոլտերը ժամանակին նկատել է, որ հարկ վճարել նշանակում է տալ սեփականության մի մասը՝ պահպանելու համար մնացածը: Այս իմաստով հերքվում է նախկին Խորհրդային Միության տնտեսագետների այն տեսակետը, ըստ որի հարկը դիտարկվում էր որպես դասակարգային կատեգորիա շուկայական տնտեսություն ունեցող երկրների համար, և այն կոչված էր ամրապնդելու իշխանությունների քաղաքական ազդեցությունը:

ՎԼԱՌԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի տնօրեն, տ.գ.դ., պրոֆեսոր*

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Բյուջետային և հարկային վերահսկողությանը, որպես ՊՖՎ-ն կարևորագույն հատվածի, բնորոշ են զարգացման բոլոր հիմնական խնդիրները և ուղղությունները՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները: Բյուջետային վերահսկողության զարգացման հիմնական ուղղություններ կարելի է համարել՝

- հիմնավորված բյուջետային նորմերի և նորմատիվների մշակումը՝ ըստ հիմնարկների, ըստ ծախսերի տեսակների՝ հաշվի առնելով տարածքային և այլ առանձնահատկությունները, բյուջետային կազմակերպությունների գործունեության պայմանները,
- վերահսկողության նախնական տեսակի զարգացումը, ընդլայնումը,
- տեղեկատվական զանգվածի օգտագործման հիման վրա վերահսկողության մեթոդիկայի կատարելագործումը, որը ձևավորվում է բյուջետային պարտավորությունների կատարման պրոցեսում՝ ըստ կազմակերպությունների և ըստ բյուջետային ծրագրերի,
- ՀՀ բյուջետային օրենսգրքում բյուջետային վերահսկողության կազմակերպման հարցերի հետ կապված հիմնական դրույթների լրացում, պարզաբանում:

Նշված ուղղություններից յուրաքանչյուրի իրականացումը կապված է որոշակի դժվարությունների հետ և նախատեսված է բավականին երկարատև ժամանակահատվածի համար:

Ժամանակակից պայմաններում անհրաժեշտ է որոշել բյուջետային ֆինանսավորման նպատակայնությունը վերահսկողության նախնական փուլում՝ բյուջեների, ծրագրերի և ծախսերի նախահաշիվների քննարկման ժամանակ, քանի որ հետագա վերահսկողությունը, ֆիքսելով անօրինական ծախսերը, ի վիճակի չէ լրիվությամբ և օպերատիվորեն փոխհատուցել բյուջեի կորուստները /վնասները/: Կարծում ենք՝ օգտակար է ուսումնասիրել Շվեդիայի վերահսկողության «արդյունավետության» փորձը՝ հաշվի առնելով հայրենական առանձնահատկությունները:

Ելնելով ֆինանսական վերահսկողության տեսական հիմքերից՝ հարկային վերահսկողության արդյունավետության բարձրացման կարևոր ուղղություններից է վերահսկողության գիտամեթոդական ապահովման կատարելագործումը՝ տեղեկատվության հավաքման, մշակման և վերլուծության ժամանակակից տեխնոլոգիաների հիման վրա:

Ֆինանսական վերահսկողության մեթոդաբանությունը ներառում է որոշակի հաջորդականությամբ վերահսկողության եղանակների ամբողջություն: Եթե հասարակությունը դրսևորում է անհանդուրժողականություն ֆինանսական կարգապահությունը խախտողների նկատմամբ և ձգտում է այդ չարիքի վերացմանը, ապա դա վերահսկողության մարմիններին ստիպում է անընդհատ հետևել մեթոդաբանության կատարելագործման խնդիրներին, որը կնպաստի վերահսկողության արդյունավետության բարձրացմանը: Եթե պետության մեջ անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում վերահսկողությանը, վատ են լուծվում վերահսկողության մարմինների նյութատեխնիկական մակարդակի բարձրացման հետ կապված բոլոր կազմակերպական հարցերը, ապա այդ դեպքում բավարար ուշադրություն չի դարձվում մեթոդական հարցերին:

Բյուջետային և հարկային ստուգումների ժամանակ հաշվարկային /վճարային/, վալյուտային հաշիվների հետ կապված գործառնությունների ստուգման ժամանակակից մեթոդաբանությունը վճարային հանձնարարագրերի «մեխանիկական ստուգում» է /որպես կանոն, մասնակի/, որի դեպքում հնարավոր է հեշտությամբ բաց թողնել կարևոր տեղեկատվություն: Կցված փաստաթղթերի համեմատումը բանկից դուրս գրվածների հետ պահանջում է լրացուցիչ ժամանակ, հաճախ դրա անհրաժեշտությունը չկա, բայց կարող են լինել իրավիճակներ, երբ 1-2 բաց թողնված փաստաթղթերը ֆինանսական, հարկային խախտումների փաստեր են:

Այսպիսով, «մեծածավալ» փաստաթղթերի ուսումնասիրման մեթոդաբանությունը, դրանց մեծ ծավալի և ստուգման պրոցեսի միատարրության դեպքում, կարող է նպաստել կարևոր տեղեկատվություն բաց թողնելուն, հատկապես, եթե տեղի է ունեցել մասնակի ստուգում:

ՊՖՎ-ն մեթոդական բազայի կատարելագործման կարևորագույն ուղղություններից է վերահսկիչ պալատին կից ենթագերատեսչական մոր կառույցների ստեղծմանը, մասնավորապես՝ համակարգային վերլուծության պետական գիտահետազոտական ինստիտուտ և տեղեկատվական կենտրոն, ինչպես արվել է ՌԴ-ում: Նշված կառույցներն էլ իրենց հերթին պետք է ստեղծեն միասնական տեղեկատվական բազա: Այստեղ կարևոր խնդիր է միջոցների օգտագործման արդյունավետությունը ստուգումների անցկացման ժամանակ:

Մեր կողմից իրականացված հետազոտությունը հաստատում է բյուջետային և հարկային ստուգումների մեթոդաբանության կատարելագործման անհրաժեշտությունը, նախ և առաջ՝ դրամական միջոցների հոսքերի նկատմամբ մոնիտորինգի ապահովման և ֆինանսական վերահսկողության շահերի շրջանակներում տվյալների օգտագործման հիման վրա:

Բյուջետային վերահսկողության հայրենական և արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ վերահսկողության առավել արդյունավետ ձև է նախնական վերահսկողությունը: Այս ձևը պետք է դառնա առաջնային, հիմնական՝ բյուջետային կազմակերպությունների հետագա վերահսկողության համեմատությամբ, որպեսզի կանխվի բյուջետային ոլորտում ոչ նպատակային, անօրինական, անարդյունավետ, չհիմնավորված ծախսերի կատարումը: Բյուջեի ծախսերի նկատմամբ վերահսկողության նախնական ձևը իրականացվում է որոշակի մեթոդների և եղանակների /փորձաքննություն, համեմատում, վերլուծություն/ ամբողջության

միջոցով՝ կազմակերպությունների ծախսերի նախահաշիվների կազմման, քննարկման, հաստատման փուլերում: Վերահսկողության նշված եղանակները և մեթոդները ենթադրում են նախորդ տարիների մասին լայնածավալ տեղեկատվական բազայի առկայություն:

Մակայն, ներկայումս պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների մեծ մասում բացակայում է վերահսկվող օբյեկտի մասին արտաքին տեղեկատվության ստացման, վերլուծության և օգտագործման համակարգը, որի հիման վրա հնարավոր կլիներ օպերատիվորեն իրականացնել նախնական վերահսկողություն բյուջեների նախագծերի, բյուջետային կազմակերպությունների ծախսերի նախահաշիվի, բյուջեից ֆինանսավորվող առանձին ծրագրերի նկատմամբ:

Ֆինանսական վերահսկողության համար ելակետային տեղեկատվությունը պետք է ձևավորվի և օգտագործվի այն մարմնի կողմից, որի պարտականությունների մեջ է մտնում բյուջեների նախագծերի, կազմակերպությունների ծախսերի նախահաշիվի փորձաքննությունը:

Արդի բյուջետային նախնական վերահսկողության մեթոդաբանության հիմնական թերությունը, ըստ բյուջեների, նախահաշիվների ծախսերի գումարների որոշման, նրանց նպատակայնության գնահատման նկատմամբ սուբյեկտիվ մոտեցումն է: Չնական հաշվարկները /հաշիվները/ քիչ են կիրառվում վերահսկիչ և ֆինանսավորող մարմինների կողմից, չի իրականացվում արդյունավետության վերահսկողություն:

Ներկայումս ֆինանսական վերահսկողության իրականացման մեջ հիմնական դերը վերապահված է պետական գանձապետարանի մարմիններին, մունիցիպալ կառույցների և սուբյեկտների համանման մարմիններին, որոնցում դրանք ձևավորվել են: Մեր կարծիքով պետական գանձապետարանի մարմիններին չպետք է բնորոշ լինի հետագա վերահսկողությունը, քանի որ նրանց գործառնությունները սահմանափակվում են բյուջեի դրամարկղային կատարման պրոցեսում նախահաշիվային նպատակների պահպանման նկատմամբ նախնական վերահսկողության մեջ: Գանձապետական մարմինները այժմ տիրապետում են բավականին մեծ չափի հաշվային և վերլուծական տեղեկատվության, որն անհրաժեշտ է ֆինանսական վերահսկողության իրականացման համար:

Մենք գտնում ենք, որ առկա է ռեալ նյութատեխնիկական բազա ստուգումների մեթոդաբանության մեջ նոր տեխնոլոգիաների ներդրման համար՝ ստուգվող կազմակերպությունների դրամական միջոցների հոսքերի վերլուծության միջոցով: Դա կնպաստի ստուգման ժամկետների կրճատմանը, ամբողջական մեթոդով ստուգվող օպերացիաների շրջանակների ընդլայնմանը, և արդյունքում՝ կբարձրանա վերահսկողության արդյունավետությունը: Դրա համար ցանկացած կազմակերպության ստուգումից առաջ վերստուգողները պետք է ունենան համակարգված և լրիվ /ամբողջական/ տեղեկատվություն ստուգվող օբյեկտի դրամական միջոցների շարժի մասին կոնկրետ ժամանակահատվածի կտրվածքով՝ ստացված պետական գանձապետական մարմինների կողմից, համակարգված ձևով:

Այն կազմակերպությունների համար, որոնք չեն անցել գանձապետական համակարգի, կարելի է տեղեկատվության անհրաժեշտ զանգվածը ձևավորել բանկերի դուրս գրած փաստաթղթերի հիման վրա /վճարովի հիմունքներով կամ անվճար՝ օրենսդրությամբ համապատասխան/: Տվյալների տեղեկատվական բազայի օգտագործումը թույլ կտա նախնական և արտագնա ստուգումների ժամանակ ուշադրությունը կենտրոնացնել կազմակերպությունների ծախսերի նպատակայնության, օրինականության պարզաբանմանը՝ ստուգման համար ընտրված տվյալների վերլուծության հիման վրա:

Տվյալների բազայում բացառիկ կարևոր հատված պետք է համարել կազմակերպությունների փաստացի ծախսերի մասին տեղեկատվությունը՝ արտադրական ցուցանիշների միավորի հաշվով:



Բյուջետային վերահսկողության գործող մեթոդաբանության ուսումնասիրումը մեզ թույլ է տվել բացահայտել հիմնական թերությունների բնույթը, որոշել դրանց վերացման ուղիները՝ հաշվի առնելով ֆինանսական վերահսկողության միջազգային փորձը և հայրենական պայմանները: Փորձենք համակարգել ստացված արդյունքները՝ որոշելով հնարավոր դրական արդյունքները, որոնք բխում են թերությունների վերացման առաջարկություններից (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Բյուջետային վերահսկողության մեթոդաբանության թերությունները, դրանց վերացման ուղիները

Վերահսկողության մեթոդները	Բացահայտված թերությունները
Թեմատիկ ստուգումներ	1. Հիմնականում կիրառվում է վերահսկողության մասնակի /ընտրողաբար/ եղանակը: 2. Վերահսկողության օբյեկտի սուբյեկտիվ ընտրությունը: 3. Վերահսկողության օբյեկտի ոչ միշտ ներկայացուցչական ընտրությունը: 4. Թույլ են կիրառվում տեղեկատվության վերլուծության մոդ տեխնոլոգիաները: 5. Չկա ամբողջական տեղեկատվական բազա վերահսկողության օբյեկտների մասին: 6. Բացակայում են գիտականորեն հիմնավորված և հաստատված բյուջետային նորմերը, նորմատիվները՝ որպես վերահսկողության համար երկեստային տեղեկատվություն:
Համալիր վերստուգումներ	1. Թույլ է կիրառվում օպերատիվ հետազա վերահսկողությունը: 2. Անբավարար է օպերատիվ վերահսկողության տեղեկատվական բազան: 3. Սահմանափակված է ստուգման փաստացի մեթոդների կիրառման հնարավորությունը: 4. Չի ապահովվում վերահսկողության արդյունավետությունը, եթե հնարավոր չէ փոխհատուցել բացահայտված վնասը: 5. Վերահսկողության օբյեկտի ընտրության ժամանակ քիչ է հաշվի առնվում արդյունավետության սկզբունքը:
Առաջարկվող միջոցառումներ	Մպատվող դրական արդյունքները
Անցկացնել «միջանկյալ» թեմատիկ ստուգումներ /բյուջետային համակարգի բոլոր մակարդակներում/՝ ըստ ծախսային հոդվածների հիմնական տեսակների	1. Ծախսերի ֆունկցիոնալ խմբավորման շրջանակներում, ըստ ծախսերի տնտեսական դասակարգման, նորմերից և նորմատիվներից շեղումների բացահայտման արդյունքում բարձրանում է վերահսկողության արդյունավետությունը: 2. Չնախորվում է տվյալների բազա՝ բյուջետային նորմերի և նորմատիվների վերանայման համար՝ ծախսերի արդյունավետության ձեռքբերման նպատակով: 3. Կրճատվում է ըստ ծախսային ուղղությունների՝ ոչ նպատակային և անօրինական ծախսերի հավանականությունը կոնկրետ ճյուղում:
Իրականացնել օպերատիվ փաստաթղթային ստուգումներ՝ կողմնորոշված դեպի արդյունավետ վերահսկողությունը	1. Վերահսկողության օբյեկտների հիմնավորված ընտրություն: 2. Կրճատվում է վերստուգման ցիկլը /հաճախ 1 անգամ 2 տարում/: 3. Խախտումները բացահայտվում են վաղ /սկզբնական/ շրջանում: 4. Կիրառելով գույքագրման անսպասելիության սկզբունքը՝ բարձրանում է փաստացի վերահսկողության դերը: 5. Մեծանում է բացահայտված վնասը բյուջե փոխհատուցելու հավանականությունը:

Մեր կողմից առաջարկված մախնական և հետազա բյուջետային վերահսկողության բարեփոխված մեթոդաբանության հիմքում առաջարկվում են հետևյալ քայլերը.

- պլանավորվող ժամանակահատվածում վերահսկողության ենթակա կազմակերպությունների ընտրություն՝ հաշվի առնելով վերահսկողության ենթադրվող արդյունավետությունը և ոչ թե ստուգումների հերթականության պահպանումը,
- կազմակերպությունների բյուջետային հատկացումների նկատմամբ պահանջմունքների որոշումը՝ ելնելով փաստացի արտադրական ցուցանիշներից և օգտագործվող նորմատիվներից /հաստատված կամ վիճակագրական/,
- կիրառվող նորմերի և նորմատիվների ուսումնասիրման միջոցով՝ բյուջետային ծախսերի, տնտեսավարման մոտավորապես նմանադիպ պայմաններում գործող տարբեր կազմակերպությունների նույնատիպ ծախսերի դինամիկայի արդյունավետության վերլուծություն, վարչատարածքային միավորի սահմաններում կազմակերպությունների ծախսերի էական տատանումների պատճառների վերլուծություն և բացահայտում՝ տվյալների մշակման ավտոմատացված համակարգի և առավել լրիվ տեղեկատվական բազայի օգտագործման վրա հիմնված նոր տեխնոլոգիաների կիրառմամբ,
- պլանային հատկացումների վերլուծություն, կանխարգելիչ միջոցների ընդունման հետ կապված առաջարկությունների պատրաստում՝ ոչ նպատակային և տնտեսապես չհիմնավորված ծախսեր թույլ չտալու նպատակով,
- հիմնական տնտեսական օպերացիաների ընտրություն, որոնք սկզբնական փաստաթղթերով ենթակա են տեղում ստուգման,
- անսպասելի գույքագրման անցկացում,
- ստուգման համար ընտրված գործարքների հետ կապված սկզբնական փաստաթղթերի ստուգում,
- նախորդ ստուգումների հանձնարարականների կատարման ստուգում,
- վերստուգման արդյունքներով ակտի կազմում և մեղավորների նկատմամբ պատասխանատվության միջոցների ընտրություն պատճառված վնասի վերականգնման համար:

Վերը թվարկված քայլերը բնորոշում են բյուջետային վերահսկողության մեթոդաբանության էությունը, որը հենվում է օբյեկտիվ և առավել լրիվ տեղեկատվական բազայի վրա, ոչ թե այն, որոնց վերահսկողության մարմինները տիրապետում են ներկայումս՝ օգտագործելով վերահսկողության օբյեկտի մոնիտորինգի առավելությունները: Վերահսկողության համար օբյեկտների ընտրության նոր եղանակները, դրամական միջոցների շարժի մասին վերլուծական նյութերի օգտագործումը, ծախսերի նախահաշվի կատարման մասին հաշվետու տվյալների կանոնավոր վերլուծությունը թույլ կտա մեծացնել ստուգվող կազմակերպությունների, հաստատությունների քանակը, կրճատել փաստաթղթային ստուգումների անցկացման ժամանակը և բարձրացնել դրանց արդյունավետությունը:

Հարկային վերահսկողության մեթոդաբանական հիմքերի առավել խորը ուսումնասիրման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ առանց դրանց մշակման հնարավոր չէ լուծել վերահսկողության արդյունավետության բարձրացման խնդիրները: Կամերալ և արտագնա հարկային ստուգումների իրականացման կիրառվող մեթոդները, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, չի ապահովում հարկային վճարումների ամբողջական և ժամանակին հավաքագրումը բյուջե, այդ պատճառով հարկային վերահսկողության առավել արդյունավետ մեթոդների որոնումը միանգամայն արդիական է: Հարկային վերահսկողության ժամանակակից տեխնոլոգիան հիմնված է վերահսկողության փորձագիտական մեթոդների վրա. հայտարարագրերի տվյալները համեմատվում են հաշվետու տվյալների, սկզբնական փաստաթղթերի, հաշվապահական հաշվառման գրանցամատյանի հետ: Փորձագիտական գնահատման համակարգը թույլ չի տալիս լրիվությամբ և կարճ ժամանակում բացահայտել հարկային իրավախախտումները, այն բավականին աշխատատար է և թանկ, պահանջում է հարկային տեսուչների մեծ թիվ:

Համերալ և արտագնա հարկային ստուգումների գործող մեթոդները կարիք ունեն բարեփոխումների, լրացումների՝ տվյալների մշակման ավտոմատացված համակարգում առավել ամբողջական տեղեկատվական բազայի օգտագործման հիման վրա: Վերահսկողության մեթոդաբանության խնդիրները հիմնովին կարելի է լուծել հարկատուների անկանխիկ դրամական հաշվարկների մասին արտաքին տեղեկատվության օգտագործման և մշակման օգնությամբ՝ մոնիտորինգի և հարկատուների հաշվետու տվյալներից ստացված տեղեկատվության համեմատմամբ՝ ժամանակակից տեխնոլոգիաներ կիրառելով:

Հարկային վերահսկողության մեթոդիկայի հարցերի մասին գործնականում չկան հատուկ աշխատանքներ և հրատարակություններ, բացառությամբ մասնագետների, գիտնականների կողմից տվյալների աշխատանքի¹, որոնցում շարադրվում են հարկային վերահսկողության կառավարման համակարգի ձևավորման նոր մեթոդաբանական մոտեցումներ՝ հիմնված ինտելեկտուալ ներդրողական մաթեմատիկական մոդելների վրա: Իրենց աշխատանքում հեղինակները սահմանել են հարկային վերահսկողության կառավարման արդյունավետ համակարգի ձեռքբերման հետ կապված մի շարք խնդիրներ, ինչպիսիք են՝ ներդրողական տնտեսամաթեմատիկական մոդելների կառուցման նոր սկզբունքների մշակումը, մոդելների իրացման տեխնոլոգիաների տեղեկատվության ապահովման մշակումը, հարկատուների հայտարարագրերի ցուցանիշների արժանահավատության գնահատման կիրառական խնդիրների առաջադրումը և լուծումը:

Մեր կարծիքով, առաջարկվող մեթոդը հետաքրքիր է վարչական միավորի /մարզ, քաղաք, շրջան/ հարկային ներուժի կանխատեսման համար: Հեղինակների կողմից կառուցված մոդելները հիմնված են հարկատուների հաշվետվությունների տեղեկատվության վրա, որոնց զգալի մասը կարող է չարտացոլել գործերի իրական վիճակը, այդ պատճառով հարկատուների տնտեսական գործունեության ենթադրվող արդյունքների արժանահավատության ապահովումը վերահսկողության «սուրբելիտի» համախառն ֆինանսական արդյունքի մոդելավորման միջոցով մեզ թվում է խնդրահարույց:

Ցանկացած տնտեսամաթեմատիկական մոդելներ, կառուցված նույնիսկ հարկատուների շատ մեծ վիճակագրական տվյալների վրա, չեն կարող հաշվի առնել բոլոր գործոնները, որոնք ազդում են կոնկրետ հարկատուի հարկային բազայի ձևավորման վրա: Հարկային մարմինների գործունեության մեջ «Հարկատու 3» ավտոմատացված տեղեկատվական համակարգի (ՄՏՀ) ներդրումը նշանակում է որակական նոր մակարդակ վերահսկողության կազմակերպման մեջ, բայց այն ընդունակ չէ բացահայտելու և վերացնելու հաշվարկներում առկա բոլոր բացթողումները /թերությունները/, հարկատուներից ստացված տեղեկատվությունում առկա խեղաթյուրումները, համակարգը չի կարող ապահովել հայտարարագրվող տվյալների արժանահավատությունը:

Վերահսկողության համար հարկատուների ինտուիտիվ ընտրությունը վատագույն տարբերակն է: Շատ կարևոր է հիմնավորված ձևով իրականացնել ընտրությունը, ինչը հնարավոր է, եթե առկա լինի ամբողջական տեղեկատվություն հարկատուների ֆինանսական գործարքների մասին:

«Ձրոյական» հայտարարագրերի ստուգումը պահանջում է հատուկ մոտեցում, հարկատուի մասին արժանահավատ և ամբողջական տեղեկատվության օգտագործում: Այդ դեպքերում, օրինակ, պահանջվում են բոլոր բանկային արձանագրությունները /քաղվածքները/ և դրամարկղային փաստաթղթերը:

Ստուգումների իրականացման կուտակված փորձը վկայում է, որ կիրառվող մեթոդաբանությունը զգալուն չէ գործերի իրական վիճակի, ցուցանիշների, հաշվապահական հաշվառման գրանցամատյանի տվյալների խեղաթյուրումների նկատմամբ: Բացի այդ, կամերալ ստուգումը

¹ Букаев Г.И., Бублик Н.Д., Горбаткин С.А., Саттаров Р.Ф. Модернизация системы налогового контроля на основе нейросетевых информационных технологий.-М.: Наука, 2001.

ներկայումս բավականաչափ ավտոմատացված չէ, և արդյունքը կախված է հիմնականում սուբյեկտիվ գործոններից, աշխատողների որակավորումից:

Պրակտիկան առաջ է քաշում տեղեկատվական ծրագրերի մշակման հետ կապված մոդ խնդիրներ, որտեղ ԱՏՀ-ի գործառնությունները կարտահայտվեն ոչ միայն թղթային կրիչներից էլեկտրոնային տարբերակի վերափոխելու ավտոմատացված պրոցեսի մեջ, այլև տեղեկատվական համակարգի կառուցվածքի, բովանդակության փոփոխությունների մեջ:

Քննարկելով հարկային վերահսկողության մոդ մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման հնարավոր տարբերակները՝ մեր կողմից առաջարկվում է վերլուծական նյութերի օգտագործում ստացված հարկատուների դրամական միջոցների մուտքերի և փոխանցումների քարտերից: Էլեկտրոնային տարբերակով այդպիսի քարտեր առաջարկվում է կազմել հարկատուների դրամական միջոցների շարժի մասին տեղեկատվական զանգվածի տվյալների հիման վրա: Հարկային մարմնում տեղեկատվական բազան պետք է ձևավորվի և վերլուծվի՝ հաշվի առնելով վերահսկողության կոնկրետ խնդիրները: Առաջարկվող մեթոդի ներդրումը զգալիորեն կկրճատի կամերալ և արտագնա ստուգումների իրականացման ժամկետները, կբարձրացնի դրանց արդյունավետությունը և կապահովի հանդիպակաց ստուգումների առավել ռացիոնալ պլանավորում:

Արտագնա հարկային ստուգումների ժամանակ դրամական միջոցների շարժի մասին վերլուծական նյութերի կիրառումը թույլ կտա ուշադրությունը կենտրոնացնել գործարքների կատարման փաստաթղթերի փորձաքննությանը, քարտերից կատարված դրամական միջոցների փոխանցումներին և մուտքերին, ինչը կկրճատի ստուգումների կատարման ժամկետը, կբարձրացնի հարկային վերահսկողության արդյունավետությունը: Հարկային մարմինների գործունեության տեղեկացվածությունը վերահսկողության մոդ տեխնոլոգիաներին անցման անհրաժեշտ պայմանն է, որն անկասկած կտանի դրա իրականացման ծախսերի կրճատմանը՝ տեղեկատվական զանգվածի ձևավորման վրա միաժամանակյա ոչ զգալի ծախսերի կատարման դեպքում:

Հարկային ստուգումների գործող մեթոդների վերլուծությունը թույլ է տվել բացահայտել և նշել միայն հիմնական թերությունները և խնդիրները, որոնց լուծումը համարվում է կարևոր, առաջնային: Բյուջետային մեթոդաբանության հետ համեմատած՝ հիմնական եզրակացությունները և առաջարկությունները համակարգված են աղյուսակ 2-ում:

Հարկային ստուգման անցկացման մեր կողմից առաջարկվող մեթոդի մոնիթորինգը հետևյալն է՝ անհրաժեշտ ժամանակաշրջանի համար /օրեր, ամիսներ, տարիներ/, ըստ հարկատուների անձնական հաշիվների բանկերի դուրս գրած չեկերի, ձևավորվում է վերլուծական քարտ՝ դրամական միջոցների մուտքերի և փոխանցումների վերաբերյալ:

Դրամական միջոցների մուտքերը խմբավորվում են ըստ վարկային կազմակերպությունների /ում կողմից/ հաշվեկշռային հաշիվների համարների, որոնք արտացոլում են վճարողի պատկանելությունը կազմակերպության որոշակի տեսակին /ըստ սեփականության ձևերի, գործունեության բնույթի/:

Դրամական միջոցների փոխանցումները արտացոլում են դրամական մուտքերի օգտագործման ուղղությունները և նույնպես խմբավորվում են ըստ վարկային կազմակերպությունների հաշվեկշռային հաշիվների համարների, որոնք արտացոլում են ստացողի պատկանելությունը կազմակերպությունների որոշակի խմբի:

Մենք խորհուրդ ենք տալիս բանկից ստացված տեղեկատվությունը համակարգել ըստ մուտքերի և փոխանցումների քարտերի, որոնք պետք է ձևավորվեն էլեկտրոնային տարբերակով՝ հաշվի առնելով հարկային մարմնի պահանջները՝ միասնական գերատեսչական ծրագրային արտադրանքի հիման վրա:

Հարկային վերահսկողության մեթոդաբանության թերությունները, դրանց վերացման ուղիները

Ստուգման ձևը /տեսակը/	Մեթոդաբանության թերությունները	Առաջարկվող լուծման ուղիները, սպասվող արդյունքները
Կամերալ ստուգումները որպես հետագա վերահսկո- ղության տեսակ	1. Վերահսկողության օբյեկտների ընտրությունը հաճախ կատարվում է սուբյեկտիվորեն	1. Ըստ տեղեկատվական բազայի՝ կանոնա-վոր կերպով /ըստ պլանի/ իրականացնել գոր-ծողությունների վերլուծություն՝ դրամական հոսքերի մոնիտորինգի հիման վրա՝ վերա-հսկողության օբյեկտի ընտրության համար
	2. Ստուգման իրականացման մեթոդ-ները կարիք ունեն բարեփոխումների՝ վերահսկողության համար անհրաժեշտ պահանջվող փաստաթղթերի ծավալի որոշման եղանակները, հանդիպակաց ստուգումների անցկացման եղանակները	2. Օպերատիվորեն և առավել հիմնավորված ձևով որոշել այն սկզբնական փաստաթղթերի ցանկը, որոնք ենթակա են ստուգման կամերալ ստուգումների ընթացքում՝ դրամա-կան հոսքերի շարժի մասին տեղեկատվական զանգվածի վերլուծության հիման վրա
	3. Մեկ հայտարարագրի ստուգման ժամկետը բավականին երկար է, նվազում է ըստ ստուգումների քվաքանակի պլանը՝ ելնելով տեսուչների իրական քվաքանակից	3. Կրճատվում են դրամական հոսքերի մասին տվյալների վերլուծության վրա հիմնված կամերալ և արտագնա ստուգումների իրակա-նացման ժամանակ համապատասխան մալա-տակների ձեռքբերման համար անհրաժեշտ ժամանակի ծախսերը:
	4. Ստուգման արդյունքների իրացման խնդիրները /հարկատուի հրաժարվելը, անհրաժեշտ է կրկնակի ստուգում, կամ նյութերի պատրաստում և ներկայացում դատարան/	4. Բարելավվում են հարկային վերահսկո-ղության արդյունավետության գնահատման ցուցանիշները՝ ժամանակի կրճատման, ստուգվող հարկատուների թվի մեծացման հաշվին
Ստուգման ձևը	Բացահայտված թերությունները	Առաջարկվող լուծման ուղիները
Արտագնա	1. Թույլ /քիչ/ են օգտագործվում վերահսկողության օբյեկտի ընտրութ-յան տարբերակները, որոնք հաշվի են առնում ստուգման կանխատեսվող արդյունավետությունը:	1. Արտագնա ստուգումների քվաքանակը կտրուկ կրճատվում է դրամական միջոցների շարժի մասին տեղեկություններ ներառող տեղեկատվական համակարգի օգտագործ-ման վրա հիմնված արդյունավետ կամերալ ստուգումների հաշվին:
	2. Ստուգման տևողությունը պլանա-վորվում է օրենսդրությամբ սահման-ված նորմատիվների շրջանակներում, չկան ժամկետների տարբերակման չափանիշներ:	2. Օգտագործել «վերստուգման ցիկլի» արտասահմանյան երկրների փորձը՝ սահմանափակում փոքր հարկատուների հա-մար, անսահմանափակ ժամկետ՝ խոշորների համար:
	3. Մահմանափակված են ստուգման համատարած եղանակների հնարա-վորությունները:	3. Ներդնել հարկատուի մասին տեղե-կատվության հավաքման և վերլուծության նոր տեխնոլոգիաներ, ինչը թույլ կտա մեծացնել, ընդլայնել համատարած մեթոդները մինչև արտագնա ստուգումները սկսելը:
	4. Մասնակի /ընտրողաբար/ ստուգում-ները կարող են արդյունք չտալ:	4. Ստուգման համար անհրաժեշտ գործողութ-յունների և ժամանակահատվածների մաս-նակի /ընտրողաբար/ ընտրությունը իրակա-նացնել՝ հաշվի առնելով հարկատուի մասին տեղեկատվական զանգվածի տվյալները:
	5. Գանձված հարկերի, տույժերի բաժինը մեծ չէ, ինչը վկայում է վերահսկողության ցածր արդյու-նավետության մասին:	5. Օրենսդրությունում նախատեսել չվճարում-ներ թույլ տված պաշտոնատար անձանցից հարկերի, տուգանքների գանձման հնարա-վորությունը՝ ստուգման արդյունքների հիմնավորվածության պայմանով:
	6. Բացակայում է «գրոյական» հայտարարագրերով ֆիրմաների վրա ներգործության մեխանիզմը	6. Կիրառել օպերատիվ ներգործության բացա-ռիկ միջոցներ հիմնադիր փաստաթղթերում փո-փոխությունների կատարման ժամանակ:

Թղթակիցների կողմից հարկատուի հաշվին կատարված մուտքերը ծախսեր են՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնորդների մոտ, որոնք անուղղակիորեն արտացոլում են նրանց հնարավոր եկամուտները: Օրինակ՝ «Ա» կազմակերպությունը փոխանցել է մի քանի միլիոն մեր կողմից ստուգվող «Բ» կազմակերպության հաշվին: Նշանակում է, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել «Ա» կազմակերպությանը, անհրաժեշտության դեպքում հայտնել այլ հարկային մարմնին անհրաժեշտ տեղեկատվություն կամ հարցնել նրանից «Բ» կազմակերպության մասին անհրաժեշտ տեղեկություններ:

Հարկատուի դրամական միջոցների մասին մուտքերի և փոխանցումների քարտի տվյալների համեմատումը կարող է տալ օգտակար տեղեկատվություն դրամական հոսքերի բնույթի մասին: Հարկային մարմնի որոշմամբ /հայեցողությամբ/ բանկային հաշիվների մասին տեղեկությունների կոմբինացիան կարող է ձևավորվել ըստ տարբեր չափանիշների՝ ելնելով լուծվող խնդիրներից:

Փոխանցումների քարտի հիման վրա կարելի է օպերատիվորեն և արժանահավատ տեղեկատվություն ստանալ հարկատուի ծախսային գործարքների բնույթի մասին՝ ունենալով փոխանցում, ինչ փաստաթղթի հիման վրա: Այնուհետև, անհրաժեշտ է միայն հարկատուից պահանջել կոնկրետ սկզբնական փաստաթղթեր տեղեկատվության պարզաբանման համար:

Առաջարկվող քարտերով կարելի է վերլուծել անկանխիկ ծախսերի և բանկից տրված կանխիկ վճարումների հարաբերակցությունը, ընդունել որոշումներ հարկային վերահսկողության հետ կապված միջոցառումների մասին: Օրինակ, հարկատուի հաշվին մուտք են լինում մեծ միջոցներ, դրանք շատ օպերատիվորեն փոխանցվում են այլ հաշիվների վրա, իսկ այդ հաշիվներից մուտքագրված փողերը բանկի կողմից տրվում են կանխիկ: Եթե առկա է հարկատուի մասին ամբողջական տեղեկատվություն՝ ունից են ստացված փողերը և ունեն փոխանցվել ու տրվել, ապա կարելի է օպերատիվորեն պահանջել ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթեր՝ չսպասելով ընթացիկ տարվա հարկային հայտարարագրին: Փաստաթղթերի պահանջման այսպիսի հնարավորությունը նպատակահարմար է կիրառել ՀՀ հարկային օրենսդրությունում:

Այսպիսով, մեր կողմից առաջարկվող հարկային ստուգումների մեթոդը ներառում է հետևյալ հիմնական քայլերը՝

1. Անձնական հաշիվների միջոցների շարժի մասին բանկային քաղվածքների ստացում /վճարային, դեպոզիտային և փոխատվական/ էլեկտրոնային փոստով,
2. Վարկային կազմակերպություններում անձնական հաշվեկշռային համարներով դուրս գրված փաստաթղթերի ստուգում,
3. Հիմնական հարկատուների կամ ստուգման ենթակա հարկատուների մուտքերի և փոխանցումների քարտի լրացում էլեկտրոնային տարբերակով,
4. Ըստ մուտքերի քարտերի՝ դրամական հոսքերի վերլուծություն,
5. Հիմնական հարկատեսակների գծով պոտենցիալ հարկման բազայի որոշում, որոնց հարկման բազան կախված է իրացումից, հատույցի չափից,
6. Փոխանցումների քարտերի հիման վրա դրամական հոսքերի վերլուծություն՝ անկանխիկ հաշվարկների ուղղությունների և վճարողին կանխիկ վճարումների մեծության որոշման նպատակով,
7. Քարտերում առկա արդյունքների համեմատում հարկատուների հաշվետվությունների հետ,
8. Վերլուծական արդյունքների հիման վրա եզրակացությունների, վերլուծական աղյուսակների պատրաստում,
9. Հարկատուի մասին /հետ կապված/ որոշումների ընդունում. պահանջել կոնկրետ փաստաթղթեր, իրականացնել հանդիպակաց ստուգումներ, դրանք ներառել արտագնա ստու-

գումների համար ծրագրերի մեջ, հայտնել իրավապահ մարմիններին՝ հետախուզական միջոցառումների անցկացման համար և այլն:

Հարկային ստուգումների իրականացման մեր կողմից առաջարկվող մեթոդաբանության գլխավոր դրական արդյունքը հարկման բազան թաքցնելու կանխումը և հարկային օրենսդրությունը խախտողների նկատմամբ գործնական միջոցների կիրառումն է:

Մուտքերի և փոխանցումների քարտի հիման վրա հնարավոր կլինի արդյունավետ իրականացնել կազմակերպությունների արտագնա ստուգումները՝ ժամանակ չկորցնելով բոլոր բանկային փաստաթղթերը թերթելու վրա: Հարկային տեսուչը նպատակատուղված կստուգի անհրաժեշտ սկզբնական փաստաթղթերը նախկինում կատարված գործարքների գծով /ըստ ամսաթվերի, գումարների/:

Ըստ հարկատուի հաշվի դրամական միջոցների մուտքի և փոխանցումների՝ քարտերը թույլ կտան առավել մտածված կազմել արտագնա ստուգումների պլանները՝ հիմնվելով շրջանառության գումարների և ոչ թե այն տարիների թվաքանակի վրա, որոնց ընթացքում կազմակերպությունը չի ստուգվել: Այդ քարտերում տեղեկատվությունը կարող է խմբավորվել ըստ հետևյալ հատկանիշների և ուղղությունների՝

1. ըստ հարկատուների հաշվառման վայրի,
2. ըստ հարկատեսակների /ԱԱՀ, շահութահարկ, այլ հարկեր, հատուկ հարկային ռեժիմներ/,
3. ըստ սեփականության ձևերի /պետական, ոչ պետական/,
4. ըստ գործունեության բնույթի /բովանդակության/:

Խմբավորված և վերլուծված տեղեկատվությունը հնարավորություն կտա նպատակատուղված, հստակ կերպով որոշել հարկատուների շրջանակը, որոնք ենթակա են ստուգման և ընտրել կոնկրետ գումարներ /ըստ ամսաթվերի/՝ կամերալ ստուգման ընթացքում կամ արտագնա ստուգումներին նախապատրաստվելու պրոցեսում սկզբնական փաստաթղթերի պահանջման համար: Դրամական միջոցների մուտքերը և փոխանցումները կարելի է խմբավորել ըստ հարկատուի գտնվելու վայրի՝ ըստ նրա իդենտիֆիկացիոն համարի, ինչը թույլ կտա վերլուծել վարչական միավորների և տարածաշրջանների դրամական հոսքերը:

Եվ այսպես, ժամանակակից պայմաններում բյուջետային և հարկային վերահսկողության զարգացումը և կատարելագործումը կախված են մի խումբ գործոններից: Ենթադրվում է պետական կառավարման մարմնի կառուցվածքի փոփոխություն /նախարարությունների թվի կրճատում, մի շարք գերատեսչությունների լուծարում/, ինչն, անկասկած ազդեցություն կունենա պետական ֆինանսական վերահսկողության մարմինների համակարգի ձևավորման ռազմավարության վրա:

Վերահսկողության մարմինների ցանկացած կառուցվածքի դեպքում չի արժեզրկվի վերահսկողության մեթոդի գործնական նշանակությունը՝ հիմնված հարկատուների դրամական հոսքերի մասին ամբողջական, արժանահավատ և համակարգված տեղեկատվության վրա: Ներկայումս, ըստ բանկային հաշիվների դրամական միջոցների շարժի մասին տեղեկատվության ոչ նշանակալի մասն է օգտագործվում ֆինանսական մոնիտորինգի ընթացքում, ինչն անհրաժեշտ արդյունք չի ապահովում վերահսկողության պրոցեսում: